ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ԱՇՏԱՐԱԿ
ՄԱՐԶ	ԱՐԱԳԱԾՈՏՆԻ

1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Աշտարակ հնամենի բնակավայրը հիշատակվում է անհիշելի ժամանակներից:

«Աշտարակ» հասարակ գոյականը իրանական ծագման բառ է, որ հայերենում կրում է «ուղիղ բարձրացող կառույց», «բերդապարսպի բուրգ», «սլացիկ բարձրաբերձ շինություն» իմաստները: Հակոբ Մանանդյանը տեղանունը իրավացիորեն նույնացնում է IV դարի Պևտինգերյան քարտեզում նշված Strangira կայարանի հետ, ենթադրելով, որ բառն ունի նախահայկական ծագում, երբ դեռ «աշտարակ» բառը հայերենում գործածական չէր: Գրիգոր Ղափանցյանը, ընդունելով Մանանդյանի այս տեղայնացումը, բառի մեջ առանձնացնում է Str- արմատը, և այն համարելով հայերեն «Շտր» հնչյունակազմի լատիներեն տառադարձություն, գտնում, որ բառի մեջ առկա է ասուրական Իշտար դիցուհու անվան փյունիկյան «Աշտար» արտահայտչաձևը: Փորձեր են արվել աշտարակ բառը կապել նաև «աշտ» (խաղաղ, բարեմիտ, հեզ), «յաշտ» (զոհաբերություն) իրանական արմատների հետ, որոնք ինչպես և «աշտարակը» ավելի ուշ փոխառություններ են և այդ պատճառով ստուգաբանությունը դարձնում են անընդունելի: «Շտր» բառը, անկասկած, կարելի է հանգեցնել «Իշտար» կամ «Աշտար» նախաձևին, ինչպես կռահել է Գրիգոր Ղափանցյանը: Սակայն նոր հետազոտությունները ցույց են տալիս, որ աքքադական այս հայտնի աստվածուհին Հայկական լեռնաշխարհում բոլորովին այլ անվանում է ունեցել: Ուրարտերեն լեզուն կրողները նրան կոչել են «Սարդի», նոր ճշգրտումներով և ավելի շուտ «Շարդի», իսկ հայերը՝ «Աստղիկ», որոնցից ոչ մեկը և ոչ մյուսը չէին կարող «Շտր» բառամասի համար հիմք ծառայել: Ուրեմն «Շտր»-ն պետք է փնտրել հայերեն բառագանձի այլ շերտերում: Հայ հնագույն էպիկական ստեղծագործությունների մեջ «Շիդար» անունով ճանաչվում է առասպելական Արտավազդ արքայի որդիներից մեկը, իսկ «շիդարներ» կոչում են նույն արքային ուղեկցող դիցաբանական արարածները: Այս բառի ծագումը նույնպես բանասերները կապում են Իշտար աստվածուհու հետ: Սակայն պետք է ասել, որ այդ կապը միայն միջնորդավորված է ոչ ուղղակի: Արդեն շեշտվեց, որ Իշտարը լեռնաշխարհում հայտնի է որպես Սարդի և Շարդի: Այս դիցուհուն են նվիրված Ուրարտական Սարդուրի կամ Շարդուրի արքայանունները: Ինչ-ինչ արտասանական առանձնահատկությունների պատճառով Շարդուրի անունը կրող բիայնական արքաները աքքադական արձանագրություններում հայտնի են որպես Սիդուր, և երբեք ոչ այլ կերպ: Եթե բառը հայերենին փոխանցման պարագայում գործել է նույն արտասանական յուրահատկությունը, ապա «ու-ա» սովորական անցման դեպքում հենց այդ անունն էլ պետք է համարել հայ բանահյուսության մեջ պահպանված «շիդար» բառի, ինչպես նաև լատիներեն «Str» հնչյունակազմի հիմքը: Այսպիսով Շիդուր կամ Շիդար բառը հաստատորեն մատնացույց է անում բիայնական Սարդուրի անունը կրող արքաներից մեկին: Բնականաբար նա չէր կարող լինել Սարդուրի Ա, որը հետագա Այրարատ նահանգում որևէ հայտնի ներկայություն չի ունեցել: Իսկ ահա Արմավիր և Երևան քաղաքների հիմնադիր Արգիշտի Ա որդին՝ Սարդուրի Բ-ը, այս տարածքներում լայն գործունեություն է ծավալել:

Աշտարակը հայկական աղբյուրներում հիշատակվում է 9-րդ դարից: Հնում մտել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի մեջ: Այստեղ կան նաև վաղ ժամանակներին վերաբերող պատմամշակութային կոթողներ:

Աշտարակում կան 6 հայկական եկեղեցիներ՝ Սուրբ Մարիանե (1281 թ.), Սուրբ Սարգիս (13-րդ դար), Ծիրանավոր (5-րդ դար), Սուրբ Աստվածածին՝ Կարմրավոր (7-րդ դար), Սպիտակավոր (13-րդ դար), Մուղնու Սբ. Գևորգ վանք /17-րդ դար/:

Հիշատակության է արժանի Քասաղի եռակամար կամուրջը, որը կառուցվել է քանաքեռցի մեծահարուստ Մահտեսի խոջա Գրիգորի կողմից 1664 թ: Մուղնի թաղամասում է գտնվում

Աշտարակը հազարամյակների պատմություն ունի: Այդ են վկայում բնակավայրի տարածքում գտնվող բոլոր բրոնզեդարյան արձանները, բնակատեղիները, դամբարանները և այլ հուշարձանները:

Երվանդ Շահազիզը իր «Աշտարակի պատմություն» գրքի մեջ նկարագրում է բնիկ աշտարակցուն: Աշտարակցին ունի իր ուրույն նկարագիրը.

Նա կենդանի է, շարժուն, աչքաբաց ու ճարպիկ, մի նկարագիր, որ արտահայտվում է նրա շարժումների, նրա արագախոսության, նրա՝ յուր խոսակցությունը հաճախ զվարճալի սրախոսություններով համեմելու սովորության մեջ...

1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Աշտարակը հայկական աղբյուրներում հիշատակվում է 9-րդ դարից: Աշտարակ քաղաքը նախկինում կոչվել է Աշտարակաց գյուղ, քաղաք է հռչակվել 1963թ.-ին: 1996թ-ից Արագածոտնի մարզկենտրոն դարձած Աշտարակ համայնքը հանրապետության միջին մեծության քաղաքներից է:

Գտնվում է Երևանից մոտ 20կմ հյուսիս-արևմուտք, Քասաղ գետի երկու ափերին, ծովի մակերևույթից 1075մ միջին բացարձակ բարձրության վրա: Ավտոմոբիլային ճանապարհների կարևոր խաչմերուկ է: Գտնվում է Երևան-Վանաձոր, Երևան-Գյումրի, Վանաձոր-Էջմիածին ուղիների հատման վայրում:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	350
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C)	-13
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C)	+24

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) Աշտարակ 1.2)|Մուղնի	2կմ

2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Աշտարակ	
3. Համայնքի հեռավորությունը՝		
3.1) մայրաքաղաքից (կմ)	18	
3.2) մարզկենտրոնից (կմ)	-	
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	32	
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	-	
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	-	
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	-	
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1100	
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	42.338	4233.8
6. Սահմանակից համայնքների անվանումները	Սասունիկ, Օշական, Պռոշյան, Կարբի	
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	ashtarak.aragatsotn@mta.gov.am ashtarakmunicipality@gmail.com	
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	www.ashtarak.am	
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	+374 232 3 10 26	
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	+374 232 3 10 26	
11. Համայնքի հեռախոսային կոդը	232	
12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո	
13.Համայնքապետարանի փոստային դասիչը	0201	
14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո	
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո	

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2020թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	25107
2. Գրանցված ծնունդների քանակը	360
2.Մահացության դեպքերի քանակը	241
3.Ամուսնությունների քանակը	237
4. Ամուսնալուծությունների քանակը	48
5. Տնային տնտեսությունների թիվը	6664
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	903
7. Կենսաթոշակառուների քանակը	3805
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	1250

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2020թ.
1. Գրադարանների քանակը	-
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	1
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	5
5. Հանրակրթական դպրոցների քանակը	7
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	1
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	-

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2020թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	710525
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	202
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	3995

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2020թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	4233
2.Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	2720
3.Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	1186
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	564
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	200
7. Խոզերի գլուխաքանակը	150
8. Գյուղատնտեսական տեխնիկա	1
8.1 տրակտորներ (քանակը)	1
8.2 կոմբայններ (քանակը)	-
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	2650

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	70
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	55

6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	7
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	2
6.2 Էքսկավատորների քանակը	-
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	1
6.4 Գրեյդերների քանակը	-
6.5 քանակը	
6.6 Աղբատար մեքենաների քանակը	5
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	2
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.9 Ավտոաշտարակների քանակը	-
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	-
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	այո, 10
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1.Ընդամենը եկամուտներ	589572.0	589425.9
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	178500.0	204993.5
2.1 հողի հարկ	33500.0	27168.7
2.2 գույքահարկ	145000.0	177824.8
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	270328.7	270328.7
3.1 դոտացիա	268695.1	268695.1
3.2 սուբվենցիա	1633.6	1633.6
4. Մուտքեր հողի օտարումից	294368.6	343714.9

Համայնքի վարչական բյուջերի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ծախսեր	591938.6	562086.9

Համայնքի ֆոնդային բյուջերի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	294368.6	343714.9

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ծախսեր	706900.0	335709.8

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	41 24
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	143056.8
3. Ավագանու անդամների թվաքանակը	15

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
1. Երկրորդային փողոցների արտաքին լուսավորության խնդիր	Համայնք – պետություն - միջազգային կազմակերպություններ և մասնավոր հատված համագործակցություն
2. Երկրորդային փողոցների ասֆալտապատման խնդիր	
3. Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների և շքամուտքերի հիմնանորոգման խնդիր	